

ԵՐԱԽԱՅԱՑՄԱԿԱՆԱԳՈՒԹԵԱՆ ԶՈԼԵՐԻՆ

Դեռ երախայ —

Աշխարհ՝ դեռ երախայի հէքեաթ, —
իմ փոքրիկ ափերից՝ հողն էր փախչում.

Երազներ:

Լոյս գիշերներ...

Լուսինը՝ ինձ էր կանչում,
Բայց և միշտ, լուսինը՝ ինձ անցնում էր,

Միշտ:

— Երախայի՝ աշխարհ-Հէքեաթ:

Էլի մի երազ. —

Փողոցի հողպվ՝ աշտարակներ էի բարձրացնում,
Ու բարձրանում

Սինչեւ լուսինը,

Որ էլ ման գայինք միասին...

— Մի ամպ ինձ զրկեց —

Դեռ երախայ:

* *

Դեռ պատանի —

Աշխարհ՝ գեռ պատանու հէքեաթ, —
Հովհեր՝ թեռ էին կապել իմ ստներին,

Դեպ ի անյայտ աւիւն ու տենչ.

Ցոյզեր:

Ցոյս գիշերներ...

Մի կարօն՝ ինձ էր կանչում,
Բայց և միշտ, կարօնը՝ ինձ անցնում էր,

Միշտ:

Էլի մի կարօն. —

Հովհերի հետ, արտերում, ես եղչա էի փնտում,
Եղէից եղէ՛ շունչս արցոնք էր դառնում,...

Որ էլ մի երգ ունենար իմ սէրը,

— Մի խուրծ ցորեն ինձ զրկեց —

Դեռ պատանի:

* *

Դեռ չափահաս —

Աշխարհ՝ դեռ չափահասի հէքեաթ, —
Անքնեւում ման եկայ խորանից խորան,
Հայեացներս՝ սրտից սիրտ խորացան,
Լոյս էի փնտում, — ոսկու փայլը տեսայ միայն,
Ես ինձ դարձիս, իմ մէջ վառեց մի նոյլ-լոյս.
Համբուրեցի...

Արեւն ինձ ընկեր:

Յուզումներ:

Խննդ գիշերներ...

Մի կեամբ ինձ էր կանչում,

Բայց և միշտ, կեամփը՝ ինձ անցնում էր,

Միշտ:

— Չափահասի՝ աշխարհ-Հէքեաթ:

Էլի մի կեամբ. —

Թղթէ մի նաւակ ես բաց թողի կեամփի. ծովում,

Ու քան նաւառը՝ նաւակին,

Ու քան սէր՝ կեամփին, —

Որ էլ ինձ համար չլինէր Հորիզոն:

— Մի ալիք ինձ զրկեց —

Դեռ չափահաս:

* *

Դեռ երիտասարդ —

Աշխարհ՝ դեռ երիտասարդի հէքեաթ, —

Ուն ու ունք ամպիր՝ ուսերիս են կառչել,

Գիշերով հմ անցնում:

Ի՞նչպէս յայտնել, երբ որոտումն է կողքիս, —

Ի՞նչպէս լուսանալ, երբ կայծակն է ինձ բակ:

Passion ներ:

Հոգեվալթ գիշերներ...

Մի մահ ինձ է կանչում,

Բայց և միշտ, Մահը ինձ անցնում է,

Միշտ:

— Երիտասարդի՝ աշխարհ-Հէքեաթ:

Էլի մի մահ. —

Աշխարհում ման եկայ խորանից խորան,

Հայեացներս՝ սրտից սիրտ խորացան,

Լոյս էի փնտում, — ոսկու փայլը տեսայ միայն,

Ես ինձ դարձիս, իմ մէջ վառեց մի նոյլ-լոյս.

Համբուրեցի...

— Խաւարն ինձ զրկեց —

Դեռ երիտասարդ:

Complex d'leare

8. Աշխարհ